| | <p>Թեմա 5 Հյուրասիրության և ռեստորանային քաղաքականությունը: Թեմա 6 գովազդի տեղը սերվիսի մարքեթինգի համակարգում Թեմա 7 Ցուցահանդեսների և տոնավաճառների կազմակերպման մարքեթինգ: Թեմա 8 Մարքեթինգային վերահսկման կազմակերպումը սերվիսում:</p> |
| Գնահատման մեթոդները և չափանիշները | <p>Գնահատումն իրականացվում է «ՎՊՐ ուսանողների գիտելիքների ստուգման, գնահատման և հաշվառման կանոնակարգե-ին համապատասխան: https://new.vsu.am/karg/2023/usanoxneri%20giteliqneri%20stugman.pdf</p> |
| Գրականություն | <p>Պարտադիր-</p> <ol style="list-style-type: none"> 1. Кучер Л. С., Организация обслуживания на предприятиях общественного питания, М., 2002. 2. Волков Ю. Ф., Интерьер и оборудование гостиниц и ресторанов, Ростов н/Д, 2003. 3. Մելքոնյան Մ.Ս. , Վ.Ս.Եղիգարյան, Հարումյան Գ.Գ., Մենեջմենտ և մարկեթինգ, Երևան, 1992: 4. Եղիգարյան Վ, Կառավարում. սոցիալ-հոգեբանական ասպեկտ, Երևան 1992: 5. Պողոսյան Հ., Մնացականյան, Մենեջմենտի հիմունքներ, Երևան, 1996: 6. Հախվերդյան Ս., Հարումյան Գ., Արտադրության կառավարման մեթոդները, Երևան, 7. Переверзев М.П., Шайденко Н.А., Басовский Л.Е. Менеджмент, Учебник, М. <p>Լրացուցիչ-</p> <ol style="list-style-type: none"> 8. Шонбергер Р., Японские методы управления производством, Девять простых уроков, Москва, |

| | | | | |
|--|---|----|--------------------|----|
| Դասընթացի թվանիշը, անվանումը | ԷԻԿ/Բ-103 -Սերվիսի հետազոտության մեթոդներ | | | |
| Դասընթացին հատկացվող կրեդիտը | 3 կրեդիտ | | | |
| Ուսումնառության տարի / կիսամյակ | 2-րդ տարի, 1-ին կիսամյակ | | | |
| Ժամերի բաշխումը | Լսարանային | 56 | Դասախոսություն | 28 |
| | | | Սեմինար | |
| | | | Լաբորատոր աշխատանք | |
| | | | Գործնական աշխատանք | 28 |
| | Ինքնուրույն | 34 | | |
| | Ընդամենը | 90 | | |
| Ստուգման ձևը | Ստուգարք | | | |
| Դասընթացի նպատակը | <p>Սերվիսի հետազոտության մեթոդներ դասընթացի նպատակն է սպասարկման ոլորտի ապագա մասնագետներին ծանոթացնել՝ հետազոտման մեթոդների էությունը, նպատակին և գործառույթներին, և նշանակությանը: Վերլուծել սպարկման ոլորտի հետազոտման ժամանակ կիրառվող մեթոդներին, դրանց դասակարգման ձևերին և գործնականում կիրառման հնարավորություններին:</p> | | | |
| Դասընթացի վերջնարդյունքները | <p>Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունք(ներ)ը. Գիտելիք ✓ մեթոդ. հասկացության էությունը,</p> | | | |

| | |
|--|---|
| | <ul style="list-style-type: none"> ✓ Իմանա ընդհանուր գիտական և սպասարկման ոլորտի ուսումնասիրման մասնավոր մեթոդները: ✓ Կորադա վերլուծել տարածաշրջանի զբոսաշրջային ներուժը <ul style="list-style-type: none"> • կարողանա գործնականում օգտագործել ստացված գիտելիքները, <p>Ջնտություն</p> <ul style="list-style-type: none"> ○ կկարողանա վերլուծել և գնահատել տարածքի սպասարկման ոլորտի ներուժը, և զարգացման առանձնահատկությունները: <ul style="list-style-type: none"> • <p>Կարողունակություն</p> <ul style="list-style-type: none"> ○ գնահատելու տարածաշրջանի սերվիսի ոլորտի զարգացման հնարավորությունները • գործնականում գիրառել հետազոտական ունակություններ: |
| <p>Դասընթացի բովանդակությունը</p> | <p>Թեմա 1` Սերվիսի ոլորտի ուսումնասիրման օբյեկտները և մեթոդները:</p> <p>Բնակչության սպասարկման ոլորտը հանդիսանում է բարդ և համալիր գիտական հետազոտությունների միջառարկայական օբյեկտ: Նրա առանձին ասպեկտներով- տեսակետերով զբաղվում է աշխարհագրությունը, Էկոնոմիկան, սոցիոլոգիան, հոգեբանությունը, մշակութաբանությունը և այլն: Սպասարկման ոլորտի ընդհանուր և հիմնական օրինաչափությունները ուսումնասիրվում են համալիր սերվիսոլոգիա առարկայի շրջանակներում:</p> <p>Սպասարկման ոլորտի հետազոտությունների զարգացումը որպես առանձին գիտական առարկա, կապված է 1980 թ 2-րդ կեսում հրատարակված Մ.Աբրամովի, Ե.Կոտլյարի, Լ. Մերկուշևի, Վ.Յուրսկու աշխատանքը կապված սպասարկման ոլորտի հարցերի հետ:</p> <p>Սպասարկման ոլորտի խնդիրները լուծելու համար ուղղորդված է մեթոդների մեծ արսենալ, հատկապես, սպասարկման ոլորտի աշխարհագրական ուսումնասիրման համալիր մեթոդներ: Ինչպես հայտնի է, գիտական ուսումնասիրությունների մեթոդները հանդիսանում են կոնկրետ միջոցներ և գիտական վերջնական նպատակներին հասնելու ճանապարհ: Թեմայում նշվում են իչպես ընդհանուր գիտական մեթոդների էությունը, այնպես էլ մասնավոր մեթոդների կիրառման հնարավորությունը սերվիսի ոլորտի ուսումնասիրությունների ժամանակ:</p> <p>Թեմա 2` Ընդհանուր գիտական մեթոդների օգտագործումը սպասարկման ոլորտում:</p> <p>Այս մեթոդները օգտագործվում են ցանկացած գիտության` մաթեմատիկայի, ֆիզիկայի, քիմիայի, կենսաբանության, հոգեբանության, սոցիոլոգիայի, տնտեսագիտության տեսության ուսումնասիրության ժամանակ: Դրանցից են դիալեկտիկական, իդեալիստական մեթոդները:</p> <p>Թեմա 3` Քանակական վերլուծությունների և մաթեմատիկական մեթոդ:</p> <p>Քանակական մեթոդի հիմքում ընկած է վիճակագրական տվյալների հավաքում, մշակում և վիճակագրական տվյալների վերլուծում: Սպասարկման ոլորտի ուսումնասիրություններում նմանատիպ մեթոդը կարելի է օգտագործել բնակավայրի, ռեզիդենտի և երկրների մակարդակով, ինչպես նաև.</p> <ul style="list-style-type: none"> - ծառայության գնի և ծավալի գնահատման և նրանց տարածա-ժամանակային փոփոխությունները. - սպասարկման ոլորտի տարածական զարգացման |

| | |
|---|---|
| | <p>տարբերությունները, վերլուծումը, գնահատումը. Թեմա 4՝ Նկարագրական մեթոդի կիրառությունը սպասարկման ոլորտում:</p> <p>Նկարագրական մեթոդ-հանդիսանում է ուսումնասիրությունների ամենահին մեթոդը: Հարկ է նշել, որ նկարագրական մեթոդը նորացված բովանդակությամբ և մոտեցումներով ակտուալ է և այսօր: Կապված արագ զարգացող միջազգային հաղորդակցության ճանապարհների, միջազգային տուրիզմի և համաշխարհային ծառայությունների շուկայի աճի հետ, աճում է երկրների, շրջանների վերաբերյալ տեղեկատվության պահանջարկը: Տեղեկությունների ստացմանը կարելի է հասնել երկրների և ռեգիոնների գիտական և գիտա-հանրամատչելի նկարագրմամբ: Այս մեթոդի օգտագործումը հատկապես էֆեկտիվ է տուրիստական և էքսկուրսիոն ծառայությունների համար:</p> <p>Թեմա 5՝ Պատմական-համեմատական մեթոդի էությունը և նշանակությունը:</p> <p>Թույլ է տալիս հետազոտել սպասարկման ոլորտի զարգացման ժամանակային քայլը, ինչպես համամոլորակային, այնպես էլ երկրների և ռեգիոնների մակարդակով: Պատմա-աշխարհագրական վերլուծության բազայի վրա կարելի է կազմել պատկերացում սերվիսի ոլորտի զարգացման ներկա վիճակի, ինչպես նաև զարգացման սկզբունքների և ապագայի մասին:</p> <p>Թեմա 6՝ Տեղեկատվության ստացման և հավաքման մեթոդ:</p> <p>Այն ընդգրկում է հեռակառավարում, լաբորատոր և դաշտային դիտարկումներ, մոնիթորինգ, սոցիալական հարցում և այլն: Գիտատեխնիկական պրոգրեսին զուգահեռ այս մեթոդները կատարելագործվում և թարմացվում են:</p> <p>Սպասարկման ոլորտի աշխարհագրական ուսումնասիրություններում տեղեկատվություն ստանալու ամենաընդունված մեթոդներն են.</p> <ul style="list-style-type: none"> -տպասգիր հրատարակչությունների վերլուծում - ինտերնետ ռեսուրսների վերլուծում. - քարտեզագրական նյութերի ուսումնասիրություն. - դաշտային հետազոտություններ և սոցիոլոգիական հարցումներ <p>Թեմա 7՝ ԱԴ-ի հետազոտության մեթոդները:</p> |
| <p>Գնահատման մեթոդները և չափանիշները</p> | <p>Գնահատումն իրականացվում է «ՎԴՀ ուսանողների գիտելիքների ստուգման, գնահատման և հաշվառման կանոնակարգե-ին համապատասխան:</p> <p>https://new.vsu.am/karg/2023/usanoxneri%20giteligneri%20stugman.pdf</p> |
| <p>Գրականություն</p> | <p>Պարտադիր-</p> <ol style="list-style-type: none"> 1. Балюк Н.А. <Методы научных исследований в сервисе и туризме> 2. Биржаков М.Б., Введение в туризм,2007 3. Кусков А.С., Джаладян Ю.А. Основы туризма2008 <p>Լրացուցիչ-</p> <ol style="list-style-type: none"> 1. Сенин В.С.,Организация международного туризма 2005 2. ՀՀ վիճակագրական տարեփոք2016 |

| | |
|--|---|
| <p>Դասընթացի թվանիշը, անվանումը</p> | <p>ՔԿ/բ206-Ռեգիոնալ աշխարհագրություն</p> |
| <p>Դասընթացին</p> | <p>3 կրեդիտ</p> |

| | | | | |
|--|---|----|--------------------|----|
| հատկացվող կրեդիտը | | | | |
| Ուսումնառության տարի / կիսամյակ | 2-րդ տարի, 2-րդ կիսամյակ | | | |
| Ժամերի բաշխումը | Լսարանային | 42 | Դասախոսություն | 22 |
| | | | Սեմինար | |
| | | | Լաբորատոր աշխատանք | |
| | | | Գործնական աշխատանք | 20 |
| | Ինքնուրույն | 48 | | |
| Ընդամենը | 90 | | | |
| Ստուգման ձևը | ստուգաթք | | | |
| Դասընթացի նպատակը | «Ռեգիոնալ աշխարհագրություն» դասընթացի նպատակն է սերվիսի ոլորտի ապագա մասնագետներին ծանոթացնել աշխարհի տարածաշրջանների ՏԱԴ-ի և ՔԱԴ-ի առանձնահատկություններին, զարգացման բնական և սոցիալ-տնտեսական նախադրյալներին, բնակչության կազմին, կառուցվածքին, տնտեսության ճյուղային կառուցվածքին, մասնավորապես սպասարկման ոլորտին և զբոսաշրջության արդի վիճակին, զարգացման հեռանկարներին: | | | |
| Դասընթացի վերջնարդյունքները | <p>Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունք(ներ)ը.</p> <p><i>Գիտելիք</i></p> <ul style="list-style-type: none"> տարածաշրջանների և պետությունների սոցիալ տնտեսական նկարագրի վերաբերյալ <p><i>Չմտություն</i></p> <ul style="list-style-type: none"> աշխարհագրական հետազոտությունների մեթոդներին <p><i>Կարողունակություն</i></p> <ul style="list-style-type: none"> ինքնուրույն եզրահանգումների միջոցով որոշի տարածաշրջանների տեղն ու դերը համաաշխարհային տնտեսական և քաղաքական կյանքում | | | |
| Դասընթացի բովանդակությունը | <p>Թեմա 1. 2ժամ</p> <p>«Ռեգիոնալ աշխարհագրություն» առարկան, ուսումնասիրության նպատակը, խնդիրները: Աշխարհի ռեգիոնալ բաժանումը</p> <p>«Ռեգիոնալ աշխարհագրություն» առարկան, ուսումնասիրության նպատակները, խնդիրները: Ռեգիոն (տարածաշրջան) հասկացությունը, ռեգիոնալ(տարածաշրջանային) ուսումնասիրություններ: Աշխարհի տարածաշրջանային բաժանման անհրաժեշտությունը: աշխարհի տարածաշրջանային բաժանումը:</p> <p>Թեմա 2. 2ժամ</p> <p>Եվրոպայի ընդհանուր բնութագիրը:</p> <p>Եվրոպան հնագույն քաղաքակրթության օրրան: Եվրոպայի աշխարհագրական դիրքը: Բնակչությունը, թիվը, բնական և մեխանիկական շարժը, ազգային կազմը: Տարածաշրջանների տնտեսության ընդհանուր բնութագիրը, ռեկրեացիոն ռեսուրսների տնտեսական գնահատականը:</p> <p>Թեմա 3. 2ժամ</p> <p>Չանգիստը և զբոսաշրջությունը Եվրոպայում</p> <p>Եվրոպայի հանգստի և զբոսաշրջային ռեսուրսների գնահատումը, զբոսաշրջային ենթակառուցվածքներ, հյուրընկալության ինդուստրիա: Չբոսաշրջային ներուժով առավել աչքի ընկնող երկրներն ըստ տարածաշրջանների:</p> <p>Թեմա 4. 2ժամ</p> <p>Եվրոպայի քաղաքական քարտեզը և կրած փոփոխությունները</p> <p>Եվրոպայի քաղաքական քարտեզի ձևավորումը, դրա վրա ազդող գործոնները: Քաղաքական քարտեզի կրած փոփոխությունները պատմական վաղ ժամանակաշրջաններից մինչև օրերը: Եվրոպայի ժամանակակից քաղաքական քարտեզը,</p> | | | |

առանձնահատկությունները: Եվրոպայի պետությունների քանակական և տիպաբանական դասակարգումները: Միջազգային տնտեսական և ռազմաքաղաքական խմբավորումները:

Թեմա 5. 2ժամ

Եվրոպայի տարածաշրջանները: Միջին Եվրոպայի ընդհանուր բնութագիրը

Պատմական ֆիզիկաաշխարհագրական և սոցիալ-տնտեսական զարգացման առանձնահատկությունների հիման վրա Եվրոպայի տարածքի բաժանումը տարածաշրջանների՝ Միջին Եվրոպա, Զյուսիսային Եվրոպա, Զարավային Եվրոպա, Արևելյան Եվրոպա: Եվրոպայի տարածաշրջանների սոցիալ-տնտեսական համեմատական բնութագրերը:

Միջին Եվրոպայի ՏԱԴ-ի և ՔԱԴ-ի գնահատականը: Չարգացման բնական նախադրյալները: Բնակչությունը: Տնտեսությունը: Տեղն ու դերը համաշխարհային տնտեսական և քաղաքական կյանքում: Միջին Եվրոպայի սպասարկման ոլորտի արդի վիճակը: Զբոսաշրջային ներուժի գնահատումը:

Զյուսիսային, Զարավային և Արևելյան Եվրոպայի ընդհանուր բնութագիրը

Զյուսիսային, Զարավային և Արևելյան Եվրոպայի համեմատական բնութագիրը: Չարգացման բնական նախադրյալները: Բնակչությունը: Տնտեսությունը: Տեղն ու դերը համաշխարհային տնտեսական և քաղաքական կյանքում: Տնտեսության ճյուղային կառուցվածքը, կրած փոփոխությունները: Ռեկրեացիոն ռեսուրսների տնտեսական գնահատականը:

Թեմա 6. 2ժամ

Ասիայի ընդհանուր բնութագիրը: Ասիայի քաղաքական քարտեզը:

Ասիայի քաղաքական քարտեզի ձևավորումը և կրած փոփոխությունները պատմական վաղ ժամանակաշրջաններից մինչև օրերը: Քաղաքական քարտեզի ձևավորմանը նպաստող գործոնները: Ասիայի պետությունների քանակական և տիպաբանական դասակարգումները:

Ասիայի քաղաքական լարված օջախները, ազդեցությունը միջազգային հարաբերությունների վրա:

Թեմա 7. 2ժամ

Ասիայի տարածաշրջանները

Պատմական, ֆիզիկաաշխարհագրական և սոցիալ-տնտեսական զարգացման առանձնահատկությունների հիման վրա Ասիայի տարածքի բաժանումը տարածաշրջանների՝ Զարավարևմտյան Ասիա, Զարավային Ասիա, Զարավարևելյան Ասիա, Կենտրոնական և Արևելյան Ասիա: Ասիայի տարածաշրջանների սոցիալ-տնտեսական համեմատական բնութագրերը:

Թեմա 8. 2ժամ

Հանգստը և զբոսաշրջությունն Ասիայում

Հանգստի և զբոսաշրջության կազմակերպումն Ասիայում: Ասիայի տարածաշրջանների ռեկրեացիոն ռեսուրսների տնտեսական գնահատականը: Բնական և ճարտարապետական հուշարձաններ: Զբոսաշրջային ներուժի առավել բարձր ցուցանիշներով աչքի ընկնող երկրները:

Թեմա 9. Ամերիկա աշխարհամասի ընդհանուր աշխարհագրական բնութագիրը: Ամերիկա աշխարհամասի քաղաքական քարտեզի ձևավորումը

Ամերիկա աշխարհամասի տարածքը, աշխարհագրական դիրքը, բնական պայմանները և ռեսուրսները: Ամերիկա աշխարհամասի տնտեսության ընդհանուր բնութագիրը, նրա տեղն ու դերն

| | |
|---|--|
| | <p>աշխատանքի միջազգային աշխարհագրական բաժանման համակարգում:</p> <p>Ամերիկյա աշխարհամասի քաղաքական քարտեզի ձևավորումը: Ձևավորման նախադրյալները: Ամերիկյա աշխարհամասի արդի քաղաքական քարտեզը: Պետությունների տիպաբանական դասակարգումը:</p> <p>Թեմա 10. Լատինական Ամերիկայի ընդհանուր աշխարհագրական բնութագիրը</p> <p>Լատինական Ամերիկայի տարածքը, աշխարհագրական դիրքը և դրա նպաստող դերը գաղութացմանը: Տրանսպորտ-աշխարհագրական դիրքի տնտեսական գնահատականը: Լատինական Ամերիկայի քաղաքական քարտեզի ձևավորումը, երկրների տիպաբանական դասակարգումը:</p> <p>Տարածաշրջանի բնական պայմանների և ռեսուրսների տնտեսական գնահատականը: Բնակչության ձևավորումը, ազգային կազմը, զբաղվածությունը, տեղաբաշխումը, տարաբնակեցումը, խոշոր քաղաքներն ու ագլոմերացիաները:</p> <p>Լատինական Ամերիկայի տնտեսության ընդհանուր բնութագիրը, տեղը համաաշխարհային տնտեսության մեջ: Տնտեսության ճյուղերի բնութագիրը, տեղաբաշխումը, մասնագիտացումը: Պետություններն ըստ տնտեսական զարգացման մակարդակների:</p> <p>Թեմա 11. 2ժամ</p> <p>Ավստրալիա և Օվկանիա տարածաշրջանի ընդհանուր բնութագիրը</p> <p>Ավստրալիա և Օվկանիա տարածաշրջանի ընդհանուր բնութագիրը: Աշխարհամասի ՏԱԴ-ի և ՔԱԴ-ի գնահատականները: Զարգացման բնական նախադրյալները:</p> <p>Տարածաշրջանի բնակչությունը: Ավստրալիա և Օվկանիա տարածաշրջանի տնտեսության ընդհանուր բնութագիրը, տնտեսության զարգացման բնական և սոցիալ-տնտեսական նախադրյալները, ռեկրեացիոն ռեսուրսները, սպասարկման ոլորտի և զբոսաշրջության զարգացման նախադրյալները:</p> |
| <p>Գնահատման մեթոդները և չափանիշները</p> | <p>https://new.vsu.am/karg/2023/usanoxneri%20giteliqneri%20stugman.pdf</p> <p>Քննության գնահատման վերջանորոշյունքն իրականացվում է հետևալ չափորոշիչներով.</p> <p>Գործնական աշխատանքների ընթացքում իմացության ստուգում</p> <p>հնքնուրույն աշխատանքների գնահատում</p> <p>-Աշխարհի տարածաշրջանների և պետությունների բնութագրության վերլուծության համակարգված գնահատում</p> <p>Ընթացիկ գրավոր ստուգում:</p> <p>-իրականացվում է 8-րդ և 15-րդ շաբաթներում` անցած նյութի ամփոփմամբ:</p> <p>Հաճախելիություն</p> <p>Գնահատման մեթոդը</p> <p>- դասերին հաճախման հաշվառում</p> <p>Գնահատման չափանիշը</p> <p>-ներկայություն</p> <p>-մասնակցություն հարցերի քննարկմանը</p> <p>Ուսուցման վերջնական արդյունքների գնահատում</p> <p>արդյունքների հանրագումար գնահատում` հարյուր միավորանոց սանդղակով:</p> |
| <p>Գրականություն</p> | <p>Պարտադիր-</p> <ol style="list-style-type: none"> 1. Ավագյան, Ա.Ռեգիոնալ աշխարհագրություն: Եվրոպա2006թ. 2. Ավագյան Ա. «Ռեգիոնալ աշխարհագրություն. Ասիա, 2010 |

| | |
|--|--|
| | <p>3. Մ. Մանասյան, Ռ. Մարգարյան Տնտեսական աշխարհագրություն 2004թ.</p> <p>4. Յու.Մուրադյան «Արտասահմանյան երկրների սոցիալ-տնտեսական աշխարհագրություն: Եվրոպա 2002թ.</p> <p>1. Յու.Մուրադյան «Արտասահմանյան երկրների սոցիալ-տնտեսական աշխարհագրություն: Ասիա, Ամերիկա, Աֆրիկա, Ավստրալիա 2004թ.</p> <p>Լրացուցիչ-</p> <p>1. В. Максаковский «Географическая картина мира», книга 1, 2006</p> <p>2. В.Вольский «Социально-экономическая география зарубежного мира» 2004</p> <p>3. В.Завьялова «Социально-экономическая география мира в таблицах» 2004</p> |
|--|--|

| | | | | |
|--|--|-----|--------------------|----|
| Դասընթացի թվանիշը, անվանումը | ԷԻԿ/բ-068-Էկոտուրիզմ | | | |
| Դասընթացին հատկացվող կրեդիտը | 4 կրեդիտ | | | |
| Ուսումնառության տարի / կիսամյակ | 4-ին տարի, 2-րդ կիսամյակ | | | |
| Ժամերի բաշխումը | Լսարանային | 56 | Դասախոսություն | 28 |
| | | | Սեմինար | |
| | | | Լաբորատոր աշխատանք | |
| | | | Գործնական աշխատանք | 28 |
| | Ինքնուրույն | 64 | | |
| | Ընդամենը | 120 | | |
| Ստուգման ձևը | ստուգարք | | | |
| Դասընթացի նպատակը | <p>✓ Բնական և մշակութային ժառանգության պահպանության օժանդակումը, Ազգաբնակչության Էկոլոգիական կրթության և իրազեկության բարձրացումը:</p> | | | |
| Դասընթացի վերջնարդյունքները | <p>Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունք(ներ)ը.</p> <p><i>Գիտելիք</i></p> <p>բնության, նրա բաղադրիչների և պատմամշակութային հուշարձանների ճանաչողության նպատակով կազմակերպվող զբոսաշրջության մասին</p> <ul style="list-style-type: none"> - բնական և մշակութային ժառանգության պահպանության օժանդակման, <ul style="list-style-type: none"> • <p><i>Հմտություն</i></p> <p>բնապահպանական, գիտաճանաչողական, մշակութային արժեքներին,</p> <ul style="list-style-type: none"> • -բնական և պատմամշակութային հուշարձանների, ռեկրեացիոն ռեսուրսների գնահատման մեթոդներին: <p><i>Կարողունակություն</i></p> <p>ձեռք բերած գիտելիքները կիրառել պրակտիկայում,</p> <ul style="list-style-type: none"> - նպաստել ազգաբնակչության Էկոլոգիական կրթության և իրազեկության բարձրացմանը: | | | |

| | |
|--|---|
| Դասընթացի բովանդակությունը | ԹԵՄԱ 1 Էկոտուրիզմի առաջացման նախադրյալները ԹԵՄԱ 2 Տուրիզմի ներագդեցությունը բնական համալիրների վրա ԹԵՄԱ 3 Էկոտուրիզմի էությունը ԹԵՄԱ 4 Էկոտուրիզմի հատկանիշները ԹԵՄԱ 5 Էկոտուրիզմի տեսակները ԹԵՄԱ 6 Ազգային պարկեր, արգելավայրեր և արգելոցներ ԹԵՄԱ 7 Տեղաբաշխման միջոցները և Էկոտուրիզմը ԹԵՄԱ 8 Էկոտուրիզմի աշխարհագրությունը: ԹԵՄԱ 9 Էկոտուրիզմի զարգացման նախադրյալները ՀՀ-ում: |
| Գնահատման մեթոդները և չափանիշները | Գնահատումն իրականացվում է «ՎՊՀ ուսանողների գիտելիքների ստուգման, գնահատման և հաշվառման կանոնակարգե-ին համապատասխան: https://new.vsu.am/karg/2023/usanoxneri%20giteliqneri%20stugman.pdf |
| Գրականություն | Պարտադիր- 1. Александрова А.Ю. Экономика и территориальная организация международного туризма. - М., 1996. 2. Александрова А.Ю. Международный туризм. - М., 2001 3. Биржаков М.Б. Введение в туризм. - СПб., 2001. 4. Зорин И.В., Квартальнов В.А. Энциклопедия туризма. - М.: Финансы и статистика, 2000. 5. Николаенко Д.В. Рекреационная география. - М., 2001 6. Сенин В.С. Организация международного туризма: Учебник. - М.: Финансы и статистика, 2003. 7. Соколова М.В. История туризма. - М.: Академия, 2004. 8. Храбовченко В.В. Экологический туризм. - М.: Финансы и статистика, 2004 Լրացուցիչ- 1. Экономика и организация туризма: международный туризм / Под ред. И.А. Рябовой, Ю.В. Забаева, Е.Л. Драчевой. |

| | | | | |
|--|---|----|--------------------|----|
| Դասընթացի թվանիշը, անվանումը | ՄԻ/բ-226 Կիրառական տեղեկատվական համակարգերը սերվիսում | | | |
| Դասընթացին հատկացվող կրեդիտը | 2 կրեդիտ | | | |
| Ուսումնառության տարի / կիսամյակ | 1-ին տարի, 1-ին կիսամյակ | | | |
| Ժամերի բաշխումը | Լսարանային | 28 | Դասախոսություն | 10 |
| | | | Սեմինար | |
| | | | Լաբորատոր աշխատանք | |
| | | | Գործնական աշխատանք | 18 |
| | Ինքնուրույն | 32 | | |
| | Ընդամենը | 60 | | |
| Ստուգման ձևը | ստուգարք | | | |
| Դասընթացի նպատակը | Ուսանողներին ծանոթացնել համակարգչային տեխնոլոգիաների կառուցվածքին, տեխնիկայի, ծրագրային և ապարատային միջոցների հետ, ինչպես նաև տալ գաղափար Windows օպերացիոն համակարգի ինտերֆեյսի, ֆայլային համակարգի մասին: Սովորեցնել կիրառական | | | |

| | |
|---|---|
| | <p>ծրագրային փաթեթների օգտագործման հնարավորությունները, որոնք անհրաժեշտ են մասնագիտական ոլորտում աշխատանքի ժամանակ: Ծանոթացնել ժամանակակից տեխնոլոգիաների ներդրմամբ՝ սերվիսի ոլորտում գործունեության պլանավորման, կազմակերպման, ձևափոխման, մշակման և վերահսկման եղանակների հետ, ինչպես նաև ինտերնետային տարբեր էջերում մասնագիտական նյութերի որոնման գործընթացում կողմնորոշվելու հմտությունները: Ձևավորել մասնագիտական հետազոտության շրջանակներում SS ոլորտի պրակտիկ գիտելիքները գործնականում կիրառելու, վերլուծելու հմտություններ:</p> |
| <p>Դասընթացի վերջնարդյունքները</p> | <p>Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունք(ներ)ը.</p> <p><i>Գիտելիք</i></p> <ul style="list-style-type: none"> • Windows օպերացիոն համակարգի ինտերֆեյսը, ֆայլային համակարգի աշխատանքի հնարավորություններ: • Ինտերնետային էջերում մասնագիտական որոնումների իրականացում: • Ժամանակակից տեխնոլոգիաների ներդրմամբ՝ սերվիսի ոլորտում գործունեության պլանավորման, կազմակերպման, ձևափոխման, մշակման և վերահսկման եղանակները: • Մասնագիտական ոլորտում MS Word, MS Excel, Power Point կիրառական ծրագրերի օգտագործման հնարավորություններ: <p><i>Չմտություն</i></p> <ul style="list-style-type: none"> • Չամակարգչի ծրագրերի և սարքավորումների հետ համագործակցային աշխատանքի հմտություններ: • Խմբագրական աշխատանքների իրականացում MS Word, MS Excel և Power Point ծրագրերում: • Ինտերնետային էջերում մասնագիտական որոնումների իրականացման հմտություններ: • Ժամանակակից տեխնոլոգիաների ներդրմամբ՝ սերվիսի ոլորտում գործունեության պլանավորման, կազմակերպման, ձևափոխման, մշակման և վերահսկման հմտություններ: <p><i>Կարողունակություն</i></p> <ul style="list-style-type: none"> • կարողանա ձեռք բերած տեսական գիտելիքները կիրառել գործնականում, • տիրապետի մասնագիտական ոլորտում MS Word, MS Excel և Power Point կիրառական ծրագրերի միջավայրում աշխատանքի հիմնական սկզբունքներին և գործիքակազմին, • կարողանա լուծել կոնկրետ առաջադրանքներ համակարգչային նշված ծրագրերի կիրառմամբ՝ ըստ պահանջվող չափանիշների, • կարողանա տրված առաջադրանքի շրջանակներում կատարել ինքնուրույն եզրահանգումներ: |
| <p>Դասընթացի բովանդակությունը</p> | <p>Թեմա 1. Չամակարգչի կառուցվածքը և նրա հիմնական սկզբունքները, համակարգչի կառուցվածքային սխեման:</p> |

| | |
|---|--|
| | <p>Համակարգչի ներքին և արտաքին սարքավորումները, ծրագրային միջոցները: Windows օպերացիոն համակարգ, ստանդարտ ծրագրերը:</p> <p>Թեմա 2. Ճանաթություն MS Office ծրագրային փաթեթի հիմնական ծրագրերի հետ, այդ ծրագրերի առանձնահատկությունները և նմանությունները: MS Word ծրագրի ինտերֆեյսը և հիմնական գործիքները: Աշխատանք MS Word ծրագրում: Տեքստի ներմուծում, խմբագրում, ձևավորում, համապատասխան գործիքների կիրառման միջոցով: Աշխատանքային թղթի պահպանման պատուհան (Save, Save as): Աշխատանքային թղթի պարամետրերի նշանակման պատուհան:</p> <p>Թեմա 3. Տեքստի ներմուծում և ձևավորում Font և Paragraph երկխոսական պատուհանների գործիքների կիրառմամբ: Նախագրություն(Header) և հետգրություն(Footer), ծանոթություն դրանց համապատասխան գործիքների շարքի հետ, Footnote և Endnote:</p> <p>Թեմա 4. Աղյուսակների ներդրում և ձևավորում համապատասխան գործիքների շարքերի կիրառմամբ (Table Tools): Նկարների, տեքստային արկղի, ձևավոր տեքստի ներդրում և ձևավորում: Սյունակների(Colums) ներդրում և համապատասխան երկխոսական պատուհանի գործիքների կիրառում:</p> <p>Թեմա 5. Ճանաթություն MS Excel ծրագրի հետ, ծրագրի առանձնահատկությունները և կիրառման յուրահատկությունները:</p> <p>Թեմա 6. Աշխատանք MS Excel ծրագրում, աղյուսակների կառուցում, հաշվարկների կատարում, \$ուևկցիաների ներդրում, դիագրամաների կառուցում, տվյալների սորտավորում և ֆիլտրում:</p> <p>Թեմա 7. Ճանաթություն MS PowerPoint ծրագրի հետ: Սլայդների ստեղծում, ձևավորում, ցուցադրում: Անիմացիաների և ձայնային էֆեկտների կիրառում, նկարների և աղյուսակների ներմուծում:</p> <p>Թեմա 8. Մասնագիտական անհատական սլայդների ստեղծում և ցուցադրում:</p> <p>Թեմա 9. Էլեկտրոնային փոստերի ստեղծում և վարում, \$ուևկցիոնալ հնարավորությունները և գործիքակազմը: Ամպային տեխնոլոգիաների գործիքակազմը:</p> |
| <p>Գնահատման մեթոդները և չափանիշները</p> | <p>https://new.vsu.am/karg/2023/usanoxneri%20giteliqneri%20stugman.pdf</p> <p>Համալսարանում գնահատման գործընթացը կանոնակարգվում է համաձայն գործող կարգի:</p> <p>Գործնական աշխատանքների գնահատման չափանիշները (4 ստուգում, յուրաքանչյուրը գնահարվում է առավելագույնը 5 միավոր` գումարային առավելագույնը 20 միավոր).</p> <ul style="list-style-type: none"> • հանձնարարության կատարում և կատարման որակ, • մասնակցություն լսարանային քննարկումներին, • առաջադրանքների կատարման գրագիտություն և ինքնուրույնություն, • առաջադրանքի կատարման ընթացքում համապատասխան ծրագրային միջավայրում ճիշտ, արագ կողմնորոշում և հնարավորությունների ընտրություն, դրանց գրագետ կիրառում: |

| | |
|-----------------------------|--|
| | <p>ինքնուրույն աշխատանքի գնահատման չափանիշները (2 ինքնուրույն աշխատանք, յուրաքանչյուրը գնահարվում է առավելագույնը 10 միավոր՝ գումարային առավելագույնը 20 միավոր)։</p> <ul style="list-style-type: none"> • անհատական աշխատանքի առաջին տեսակ՝ ինքնուրույն աշխատանք համացանցում. <ul style="list-style-type: none"> ✓ համացանցում անհրաժեշտ տեղեկատվության որոնում, ✓ տեղեկատվական աղբյուրների օգտագործման մշակույթ, ✓ համապատասխան թարգմանիչ ծրագրերի կիրառում, ✓ բանավոր ներկայացում, բանավոր խոսքի և թեմայի քննարկման մակարդակ; ▪ անհատական աշխատանքի երկրորդ տեսակ՝ գեկույց. <ul style="list-style-type: none"> ✓ առաջադրանքի կատարման համար ճիշտ, արդյունքվետ գործիքաչարի ընտրություն, ընդունված որոշումների հիմնավորում, կոռեկտություն, արդյունավետություն, ✓ մասնագիտական հմտությունների մակարդակ, ✓ ծրագրային միջավայրում գրագետ և հիմնավորիչ ներկայացում, ✓ բանավոր ներկայացում, բանավոր խոսքի և թեմայի քննարկման մակարդակ; |
| <p>Գրականություն</p> | <p>Պարտադիր</p> <ol style="list-style-type: none"> 1. В. С. Симонович. Информатика базовый курс, учебник для ВУЗ-ов, 2019 2. Леонтьев В. П. Новейшая энциклопедия Интернет, 2020. <p>Լրացուցիչ</p> <ol style="list-style-type: none"> 1. Բ. Ջանիդլադյան ժամանակակից քոմպյուտերային տեխնոլոգիաներ, 3-րդ հրատարակություն, 2016. <p>Էլեկտրոնային աղբյուրներ</p> <ol style="list-style-type: none"> 1. https://www.pdfdrive.com/microsoft-office-word-2007-step-by-step-ebook-pearsoncmg-e12304378.html 2. https://freecomputerbooks.com/microsoftOfficeBooks.html |

| | | | | | | | | | | | |
|---|---|-----------|--|----------------|----|---------|--|--------------------|--|--------------------|----|
| <p>Դասընթացի թվանիշը, անվանումը</p> | <p>ԷԻԿ/Բ-003-Վիճակագրություն</p> | | | | | | | | | | |
| <p>Դասընթացին հատկացվող կրեդիտը</p> | <p>3 կրեդիտ</p> | | | | | | | | | | |
| <p>Ուսումնառության տարի / կիսամյակ</p> | <p>3-րդ տարի, 2-րդ կիսամյակ</p> | | | | | | | | | | |
| <p>Ժամերի բաշխումը</p> | <p>Լսարանային</p> | <p>42</p> | <table border="1"> <tr> <td data-bbox="919 1921 1324 1957">Դասախոսություն</td> <td data-bbox="1324 1921 1567 1957">18</td> </tr> <tr> <td data-bbox="919 1957 1324 1993">Սեմինար</td> <td data-bbox="1324 1957 1567 1993"></td> </tr> <tr> <td data-bbox="919 1993 1324 2029">Լաբորատոր աշխատանք</td> <td data-bbox="1324 1993 1567 2029"></td> </tr> <tr> <td data-bbox="919 2029 1324 2065">Գործնական աշխատանք</td> <td data-bbox="1324 2029 1567 2065">24</td> </tr> </table> | Դասախոսություն | 18 | Սեմինար | | Լաբորատոր աշխատանք | | Գործնական աշխատանք | 24 |
| Դասախոսություն | 18 | | | | | | | | | | |
| Սեմինար | | | | | | | | | | | |
| Լաբորատոր աշխատանք | | | | | | | | | | | |
| Գործնական աշխատանք | 24 | | | | | | | | | | |

| | | |
|------------------------------------|---|----|
| | Ինքնուրույն | 48 |
| | Ընդամենը | 90 |
| Ստուգման ձևը | ստուգաթք | |
| Դասընթացի նպատակը | <p>ուսանողի մոտ ձևավորել հավաքագրված անհրաժեշտ ինֆորմացիան տնտեսական գործունեության ընթացքում կիրառելու տեսական և կիրառական բնույթի ունակություններ.</p> <p>2. ուսանողը կարողանա ձեռք բերած գիտելիքները կիրառել պրակտիկայում.</p> <p>3. Կարողանա հավաքագրել, խմբավորել և վերլուծել վիճակագրական տվյալներ.</p> <p>4. Կարողանա ստացված տեղեկատվությունների հիման վրա կատարել ճիշտ եզրահանգումներ:</p> | |
| Դասընթացի վերջնարդյունքները | <p>Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունք(ներ)ը.</p> <p><i>Գիտելիք</i></p> <ul style="list-style-type: none"> • վիճակագրության հիմնական հասկացությունները, կարողանա օգտվել “ՀՀ վիճակագրության մասին օրենք”-ի դրույթներից , կարողանա ուսումնասիրել վիճակագրության ոլորտում առաջացած հիմնախնդիրները և կատարել համարժեք եզրահանգումներ, վիճակագրության մեթոդներին տիրապետելու և խնդիրների լուծման կարողություն, վիճակագրական ցուցանիշների վերլուծության և կիրառության կարողություն: <p><i>Չմտություն</i></p> <ul style="list-style-type: none"> • մաթեմատիկական և վիճակագրության մեթոդներին, ինչպես նաև մաթեմատիկական մոդելավորման եղանակներին • վիճակագրական և տնտեսագիտական բոլոր մեթոդներին: • Տիրապետում է մաթեմատիկական և վիճակագրության մեթոդներին, ինչպես նաև մաթեմատիկական մոդելավորման եղանակներին: • <p><i>Կարողունակություն</i></p> <ul style="list-style-type: none"> ✓ իրագործել վիճակագրության վերաբերյալ բազմաբնույթ գիտելիքների համակարգում և տեսական վերլուծություններ • իրականացնել վիճակագրության բնագավառում առաջացած խնդիրների ուսումնասիրում ✓ մշակել վիճակագրական հետազոտության համար անհրաժեշտ փաստաթղթեր: | |
| Դասընթացի բովանդակությունը | <p><u><i>Թեմա 1. Վիճակագրության առարկան, մեթոդը և խնդիրները</i></u></p> <p>Վիճակագրության գիտության առարկան: Հասարակական կյանքի օրենքների բնույթը և վիճակագրության դերը դրանց ճանաչողության մեջ: Նշանավոր մարդկանց կարծիքը վիճակագրության գիտության մասին:</p> <p>Քանակական և որակական վերլուծության փոխկապակցվածությունը վիճակագրության մեջ: Վիճակագրության մեթոդը և նրա հիմնական հիմնական հիմնական առանձնահատկությունները:</p> <p>Մեծ թվերի օրենքը: Վիճակագրական օրինաչափությունները: Վիճակագրական գիտության կառուցվածքը: Վիճակագրական գիտության ճյուղերը: Վիճակագրության կապը մյուս գիտությունների հետ:</p> <p>Վիճակագրական հետազոտության հիմնական փուլերը: Վիճակագրական համակցություն: Համակցության միավորը: Հատկանիշ: Հատկանիշների դասակարգումը: Վիճակագրական ցուցանիշ: Ընդհանրական ցուցանիշներ: Հասկացություն վիճակագրական ցուցանիշների համակարգի մասին: Վիճակագրության հիմնական ֆունկցիաները: Վիճակագրության խնդիրները շուկայական հարաբերությունների ձևավորման և</p> | |

զարգացման ժամանակաշրջանում: Վիճակագրության մեթոդոլոգիայի կատարելագործման հարցերը: Վիճակագրության կազմակերպումը հանրապետությունում և այլ երկրներում: Միջազգային վիճակագրության մարմինները:

Թեմա 2. Վիճակագրական դիտարկում

Վիճակագրական դիտարկումը որպես վիճակագրական հետազոտության սկզբնական փուլ: Վիճակագրական դիտարկման տեսակները, ձևերը և եղանակների դասակարգումը:

Վիճակագրական դիտարկման պլանը:

Դիտարկման նպատակը, օբյեկտը և միավորը: Դիտարկման ծրագիրը:

Յրահանգը:

Վիճակագրական դիտարկման կազմակերպման հարցերը: Դիտարկման

մարմինները: Նախապատրաստական աշխատանքները:

Սկզբնական հաշվառման և հաշվետվությունների կազմակերպման

սկզբունքները: Հաշվետվությունների տեսակները: Վիճակագրական

հատուկ դիտարկումներ:

Թեմա 3. Վիճակագրական խմբավորումը: Աղյուսակներ: Բաշխման շարքեր

Խմբավորման մեթոդը, որպես վիճակագրության կարևորագույն

մեթոդներից մեկը: Խմբավորվող հատկանիշների ընտրության

պրոբլեմները: Խմբերի թվի և խմբավորման միջակայքի որոշումը:

Խմբավորումների դասակարգումը:

Վիճակագրական աղյուսակը և նրա տարրերը: Վիճակագրական

աղյուսակների տեսակները: Վիճակագրական աղյուսակների ենթակայի

կառուցման և ստորոգյալի մշակման սկզբունքները:

Բաշխման շարքեր, դրանց եւությունը և հիմնական տարրերը:

Բաշխման շարքերի կառուցումը ըստ որակական և քանակական

հատկանիշների:

Ընդհատվող և միջակայքային շարքեր: Բաշխման հիմնական

վիճակագրական բնութագիրը: Բաշխման օրենքները:

Թեմա 4. Բացարձակ, հարաբերական միջին մեծությունները և վարիացիայի ցուցանիշները

Բացարձակ մեծությունները և նրանց նշանակությունը

վիճակագրական հետազոտություններում: Բացարձակ մեծությունների

տեսակները, ստացման եղանակները: Բացարձակ մեծությունների

չափման միավորները:

Հարաբերական մեծությունների նշանակությունը, տեսակները և

արտահայտության ձևերը: Բացարձակ և հարաբերական

մեծությունների փոխկապվածությունը, նրա կոմպլեքսային կիրառման

անհրաժեշտությունը:

Միջին մեծությունների մեթոդը որպես գիտական ընդհանրացման

կարևորագույն հնարք:

Համակցության միջին և որակական համասեռությունը: Միջինների և

խմբավորումների մեթոդները, դրանց փոխկապվածությունը:

Ընդհանուր և մասնակի միջիններ:

Միջին ձևերի ընտրությունը: Միջին կշիռների նշանակությունը և

ընտրությունը:

Վարիացիայի հասարակական կյանքի երևույթները, պատճառները և

ուսումնասիրման անհրաժեշտությունն ու հնարավորությունները:

Վարիացիայի հիմնական ցուցանիշները: Վարիացիայի ցուցանիշների

օգտագործումը սոցիալ-տնտեսական հետազոտություններում:

Թեմա 5. Ինդեքսներ

Վիճակագրության ինդեքսային մեթոդը: Ազդեգատային, միջին

թվաբանական և միջին հարմոնիկական ինդեքսներ: Միջին

մակարդակի դինամիկայի վերլուծության ինդեքսային մեթոդը:

| | |
|---|---|
| | <p>Կառուցվածքային տեղաշարժերի ինդեքսը: Կարևորագույն տնտեսական ինդեքսները: Ինդեքսների փոխկապակցվածությունը: Տերիտորյալ ինդեքսներ:</p> <p><u>Թեմա 6. Երևույթների փոխկապակցվածության ուսումնասիրումը</u></p> <p>Քանակական վերլուծության դերը փոխադարձ կապերի մեջ; Չուզահեռ տվյալների մեթոդը:</p> <p>Վերլուծության խմբավորումների կիրառումը կապերի ուսումնասիրման համար: Կապերի ուսումնասիրման հաշվեկշռային և ինդեքսային մեթոդները, կոռելացիայի և ռեգրեսիայի մեթոդները: Գծային և ոչ գծային ռեգրեսիա և կորելյացիա: Մասնակի և բազմակի կորելյացիա: Կորելյացիոն և ռեգրեսիոն հավասարումների պարամետրերի իմաստի մեկնաբանումը:</p> <p>Դիսպերսիոն վերլուծության կիրառման հնարավորությունը սոցիալ-տնտեսական երևույթների վերլուծության մեջ: Քանակական և որակական հատկանիշների կապերի սերտության ցուցանիշների կառուցման մեթոդաբանական հիմունքները:</p> <p><u>Թեմա 7. Սոցիալ-տնտեսական երևույթների դինամիկայի ուսումնասիրումը</u></p> <p>Դինամիկ շարքերի հիմնական ցուցանիշները:</p> <p>Դինամիկ միջին ցուցանիշները: Դինամիկ շարքերի հարթեցումը:</p> <p>Հիմնական միտումների դրսևորումը: Դինամիկ շարքերի էքստրապոլյացիան և ինտերպոլյացիան:</p> <p>Դինամիկ շարքերի կառուցման և փոխկապակցությունների ուսումնասիրման մեթոդաբանական հիմունքները:</p> <p>Սեզոնային տատանումների վիճակագրական ուսումնասիրության հիմնական հիմնական հարցերը: Դինամիկ շարքերի օգտագործումը կանխագուշակման նպատակով:</p> <p><u>Թեմա 8. Ընտրանքային դիտարկում</u></p> <p>Հասկացություն ընտրանքային դիտարկման մասին: Ընտրանքային մեթոդի տոսական հիմունքները: Ընտրանքային դիտարկման և կիրառման անհրաժեշտությունը շուկայական հարաբերությունների պայմաններում:</p> <p>Գլխավոր և ընտրանքային համակցությունները, նրանց ընդհանրացնող բնութագրերը: Ընտրանքի տեսակները: Գլխավոր համակցությունից միավորի ընտրման եղանակները:</p> <p>Ընտրանքային դիտարկման սխալները: Ընտրանքային տվյալների տարածման եղանակները գլխավոր համակցության վրա:</p> <p>Ընտրանքային հետազոտության կիրառման հնարավորությունները ներկա էտապում:</p> <p><u>Թեմա 9. Մաթեմատիկական վիճակագրության մեթոդների կիրառումը սոցիալ-տնտեսական երևույթների հետազոտություններում</u></p> <p>Մաթեմատիկական վիճակագրության մեթոդների կիրառման մեթոդաբանական սկզբունքները: Վիճակագրական եզրակացություններ: Առավելագույն ճշմարտության մեթոդը: Դիսպերսիոն վերլուծություն: Գծային մոդելը: Դիսպերսիոն վերլուծության մոդելներ:</p> <p>Բազմաչափ բաշխման տեսությունը:</p> <p>Դինամիկ շարքերի տարապատկերային վերլուծություն:</p> <p>Համակցության տարրերի միակցության և մասնատվածության մեթոդները: Հատկանիշների միակցության/ գործոնային վերլուծություն, Գլխավոր բաղադրամասերի մեթոդը և այլն:</p> |
| <p>Գնահատման մեթոդները և չափանիշները</p> | <p>Գնահատումն իրականացվում է «ՎՊՅ ուսանողների գիտելիքների ստուգման, գնահատման և հաշվառման կանոնակարգ-ին համապատասխան:</p> <p>https://new.vsu.am/karg/2023/usanoxneri%20giteliqneri%20stugman.pdf</p> |
| <p>Գրականություն</p> | <p>Պարտադիր-</p> |

| | |
|--|---|
| | <ol style="list-style-type: none"> 1. Հակոբյան Կ.Յ.. Վիճակագրության տեսությունն ուսումնական ձեռնարկ, 2003 2. Ֆահրադյան, Կոնստանդյան Վիճակագրության ընդհանուր տեսության խնդիրների ժողովածու 1984 3. Կոզլով, Էռլիխ, Դոլգուշևսկի, Պոլյուշին, Վիճակագրության ընդհանուր տեսություն 1981 4. Պետրոսյան Ա.Ն. Վիճակագրության ընդհանուր տեսությունն ուսումնական ձեռնարկ, 2008 |
|--|---|

| | | | | |
|--|---|-----|--------------------|----|
| Դասընթացի թվանիշը, անվանումը | ԷԻԿ/Բ-104 -Էքսկուրսիոն ծառայությունների տեխնոլոգիա և կազմակերպում | | | |
| Դասընթացին հատկացվող կրեդիտը | 4 կրեդիտ | | | |
| Ուսումնառության տարի / կիսամյակ | 4-րդ տարի, 1-ին կիսամյակ | | | |
| Ժամերի բաշխումը | Լսարանային | 56 | Դասախոսություն | 28 |
| | | | Սեմինար | |
| | | | Լաբորատոր աշխատանք | |
| | | | Գործնական աշխատանք | 28 |
| | Ինքնուրույն | 64 | | |
| | Ընդամենը | 120 | | |
| Ստուգման ձևը | Ստուգաբք | | | |
| Դասընթացի նպատակը | <p>«Էքսկուրսիոն ծառայությունների տեխնոլոգիա և կազմակերպում» առարկայի դասավանդումը նպատակ է հետապնդում բացահայտել Էքսկուրսիոն տեխնոլոգիաները և ցույց տալ դրանց կազմակերպման ձևերը: Ներկայացնելով բնական և հասարակական տուրիզմի ռեսուրսները, պետք պարզաբանել դրանց գրավչությունը տուրիզմի տեսակտից և արդյունավետությունը: Պետք է ուսուցանել Էքսկուրսիոն երթուղիների ընտրության սկզբունքները, տեխնոլոգիաների մշակումը, կարողանա գնահատել Էքսկուրսիոն ծառայությունների մատուցման որակն ու գրավչությունը: Դասավանդման ընթացքում դասակարգել այդ ռեսուրսները, վեր հանել դրանց օգտագործման ժամկետները և հնարավորությունները:</p> | | | |
| Դասընթացի վերջնարդյունքները | <p>Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունք(ներ)ը.</p> <p><i>Գիտելիք</i></p> <ul style="list-style-type: none"> - Էքսկուրսիաների կազմակերպման ու տեխնոլոգիաների մասին, - Էքսկուրսիոն օբյեկտների ընտրության սկզբունքների մասին, - Էքսկուրսիոն պլանի մասին <p><i>Չմտություն</i></p> <p>Էքսկուրսիաների տեխնոլոգիաներին ու մեթոդներին,</p> <p><i>Կարողունակություն</i></p> <p>ձեռք բերած գիտելիքները կիրառել պրակտիկայում,</p> <ul style="list-style-type: none"> - Կարողանա կողմնորոշվել հաշվապահական հաշվառման և հաշվետվությունների կազմման պրոցեսների մեջ, կատարի ինքնուրույն և ճիշտ եզրահանգումներ: | | | |
| Դասընթացի բովանդակությունը | <p>ԹԵՄԱ 1 Էքսկուրսիոն ծառայությունների տեխնոլոգիայի և կազմակերպման սկզբունքները և մեթոդները</p> <ol style="list-style-type: none"> 5. Էքսկուրսիոն ծառայություններ հասկացողությունը 6. Տեխնոլոգիաների կիրառման սկզբունքները 7. Էքսկուրսիոնների կազմակերպման տեխնոլոգիաները ու դրանց | | | |

| | |
|--|---|
| | <p>ընտրությունը</p> |
| | <p><u>ԹԵՄԱ 2 Էքսկուրսիոն ռեսուրսներ</u></p> |
| | <p>4. Էքսկուրսիոն ռեսուրս հասակացություն 5. Տուրիզմի ռեսուրսների դասակարգումը 6. Ռեկրեացիոն ռեսուրսների տեղաբաշխումը</p> |
| | <p><u>ԹԵՄԱ 3 Էքսկուրսիայի կազմակերպումը բնական օբյեկտներում</u></p> |
| | <p>4. Երթուղիների ընտրություն 5. Էքսկուրսիայի պլան 6. Տեղեկատվական և գովազդային տեխնոլոգիաները բնական օբյեկտների մասին</p> |
| | <p><u>ԹԵՄԱ 4 Հասարակական գրոսաշրջային ռեսուրսները Էքսկուրսիայի օբյեկտներ</u></p> |
| | <p>4. Էքսկուրսիայի տեխնոլոգիան պատմամշակութային հուշարձաններում, 5. Էքսկուրսիայի կազմակերպումը և ագրոտուրիզմը: 6. Էքսկուրսիայի կազմակերպումն արտադրական օբյեկտներում</p> |
| | <p><u>ԹԵՄԱ 5 Հանգստի ռեսուրսները, որպես Էքսկուրսիայի օբյեկտներ</u></p> |
| | <p>4. Ծանոթացում հանգստի ռեսուրսների հետ 5. Հանգստի ռեսուրսների բազմազանությունը և դրանց Էքսկուրսիոն նշանակությունը 6. Էքսկուրսիոն տեխնոլոգիան ու դրա կիրառում հանգստի օբյեկտներում</p> |
| <p><u>ԹԵՄԱ 6 Ուժերի վերականգնման ռեսուրսները, որպես Էքսկուրսիայի վայրեր</u></p> | |
| <p>5. Բնական վերականգնող ռեսուրսները և Էքսկուրսիոնների կազմակերպումը 6. Էքսկուրսիայի կազմակերպումը բնական տեսարժան վայրերում 7. Էքսկուրսիայի տեխնոլոգիան և կազմակերպումը Էքստրեմալ կլիմայի պամաններում 8. Լեռնագնացությունը, որպես Էքսկուրսիայի տեսակ 9. Ձմեռային և այլ սպորտաձևերը, որպես Էքսկուրսիայի տեսակներ</p> | |
| <p><u>ԹԵՄԱ 7 Էքսկուրսիների բուժիչ և առողջապահական նշանակությունը</u></p> | |
| <p>5. Ռեսուրսների հաշվառում 6. Բուժական ռեսուրսները և Էքսկուրսիոնների կազմակերպումը 7. Էքսկուրսիոնների կազմակերպումը բուժիչ հանքային ջրերի տարածքներում 8. Առողջարանները և Էքսկուրսիոն գուրծունեությունը</p> | |
| <p><u>ԹԵՄԱ 8 Տեսարժան լանդշաֆտները և հատապտղային տուրիզմը, որպես Էքսկուրսիաների կազմակերպման ձևեր:</u></p> | |
| <p>4. Էքսկուրսիաների կազմակերպումը արգելավայրերում և հատուկ նշանակության օբյեկտներում 5. Հատապտղային տուրիզմը, Էքսկուրսիաների տարատեսակները 6. Էքսկուրսիաների կազմակերպումը արժեքավոր լանդշաֆտներում</p> | |
| <p><u>ԹԵՄԱ 9. Էքսկուրսիայի երթուղիներ, հյուրանոցային տնտեսություն և քեմպինգներ:</u></p> | |
| <p>5. Էքսկուրսիաների երթուղիների մշակման սկզբունքները 6. Հյուրանոցներ և քեմպինգներ, դրանց Էքսկուրսիոն նշանակությունը 7. ՀՀ տարածքում Էքսկուրսիոն երթուղիների մշակում և քարտեզագրում 8. ՀՀ Էքսկուրսիոն ծառայությունների զարգացման հեռանկարները</p> | |
| <p>Գնահատման</p> | <p>Գնահատումն իրականացվում է «ՎՊՀ ուսանողների գիտելիքների</p> |

| | |
|--------------------------------|--|
| մեթոդները և չափանիշները | ստուգման, գնահատման և հաշվառման կանոնակարգե-ին համապատասխան: https://new.vsu.am/karg/2023/usanoxneri%20giteligneri%20stugman.pdf |
| Գրականություն | <p>Պարտադիր-</p> <ol style="list-style-type: none"> 1. Լևոն Մարտիրոսյան, Ռեկրեացիոն աշխարհագրություն, Վանաձոր:2014 2. Վալենյան Լ.Յ., Հայկական ՍՍՀ տնտեսական և սոցիալական աշխարհագրություն., Ե. 1988: 3. Ավետիսյան Խ.Ա., Սովետական Հայաստանի բնակչության և բնակավայրերի աշխարհագրություն2003 <p>Լրացուցիչ-</p> <ol style="list-style-type: none"> 1. Մակարյան Ա., Հախվերդյան Դ., Նազարյան Գ., Հայաստանը միջազգային տնտեսական հարաբերությունների համակարգում,Ե., 2002: 2. Հայաստանի ազգային ատլաս, Ե., 2007: 3. Николаенко Д.В. „Рекреационная география“: 4. Власов А.А., Туризм (учеб.мед.пос.), М., 2007г. 5. Мироненко Н.С., Твердохлебов И.Т., Рекреационная география. М.,1981г. 6. Азар В.И., Экономика и организация туризма, М., 2002г. 7. Моргунов Б.П., Туризм, М., 1978г. 8. Квартальнов В.А., Средерченко В.К., Туризм социальный, Киев, |

| | | | | | | | | | | | |
|--|--|-----|--|----------------|----|---------|--|--------------------|--|--------------------|----|
| Դասընթացի թվանիշը, անվանումը | ԷԻԿ/Բ-056-Ձեռնարկչատիրական գործունեության հիմունքները սերվիսում | | | | | | | | | | |
| Դասընթացին հատկացվող կրեդիտը | 4 կրեդիտ | | | | | | | | | | |
| Ուսումնառության տարի / կիսամյակ | 2-րդ տարի, 1-ին կիսամյակ | | | | | | | | | | |
| Ժամերի բաշխումը | Լսարանային | 56 | <table border="1"> <tr> <td data-bbox="919 1258 1321 1330">Դասախոսություն</td> <td data-bbox="1321 1258 1581 1330">28</td> </tr> <tr> <td data-bbox="919 1330 1321 1361">Սեմինար</td> <td data-bbox="1321 1330 1581 1361"></td> </tr> <tr> <td data-bbox="919 1361 1321 1406">Լաբորատոր աշխատանք</td> <td data-bbox="1321 1361 1581 1406"></td> </tr> <tr> <td data-bbox="919 1406 1321 1478">Գործնական աշխատանք</td> <td data-bbox="1321 1406 1581 1478">28</td> </tr> </table> | Դասախոսություն | 28 | Սեմինար | | Լաբորատոր աշխատանք | | Գործնական աշխատանք | 28 |
| Դասախոսություն | 28 | | | | | | | | | | |
| Սեմինար | | | | | | | | | | | |
| Լաբորատոր աշխատանք | | | | | | | | | | | |
| Գործնական աշխատանք | 28 | | | | | | | | | | |
| | Ինքնուրույն | 64 | | | | | | | | | |
| | Ընդամենը | 120 | | | | | | | | | |
| Ստուգման ձևը | Քննություն | | | | | | | | | | |
| Դասընթացի նպատակը | <p>Ուսանողներին ծանոթացնել ձեռնարկչատիրության էության, ձևերի, ձեռնարկչատիրական գործունեության պլանավորման, ձեռներեցության տնտեսական բնույթի, շուկայական իրավիճակի գնահատման հետ: Ուսումնասիրվում են նաև ձեռներեցության միջավայրը, ձեռներեցության զարգացման և ակտիվացման անհրաժեշտ պայմանները: Դասընթացը կօգնի ուսանողներին ճիշտ կողմնորոշվել շուկայական հարաբերությունների պայմաններում:</p> | | | | | | | | | | |
| Դասընթացի վերջնարդյունքները | <p>Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունք(ներ)ը.</p> <p><i>Գիտելիք</i></p> <ul style="list-style-type: none"> ✓ ճիշտ հաշվարկել անհատական կամ կոլեկտիվ ձեռնարկչատիրության ժամանակ ձեռնարկության կատարած ծախսերը և ակնկալվող շահույթը ✓ Ֆիրմայի հետագա վարքագծի վերաբերյալ կանխատեսումներ կատարելու հնարավորությունները <ul style="list-style-type: none"> • Ձեռնարկության զարգացման և ակտիվացման անհրաժեշտ | | | | | | | | | | |

| | |
|--|---|
| | <p>պայմանները</p> <p><i>Հմտություն</i></p> <ul style="list-style-type: none"> ✓ Դասընթացի բոլոր թեմաները ✓ Թեմաների միջև առաջացող միջթեմայական կապերը <p>•</p> <p><i>Կարողունակություն</i></p> <ul style="list-style-type: none"> ✓ Ձեռք բերած գիտելիքները կիրառել պրակտիկ կյանքում ✓ Կողմնորոշվել սերվիսի տնտեսական գործընթացներում և կատարել ինքնուրույն եզրահանգումներ ✓ Ինքնուրույն կազմել բիզնես-պլան սերվիսի ոլորտում |
| <p>Դասընթացի բովանդակությունը</p> | <p><u>Թեմա 1</u> - «Ձեռնարկչատիրություն և հասկացությունը, ֆունկցիաները, սոցիալ-տնտեսական բովանդակությունը</p> <p>«Ձեռնարկչատիրություն և հասկացությունը: Ձեռնարկչատիրության մրցակցության ապահովման, իրավական, սեփականատիրական, կարգավորիչ, վերարտադրողական և հետևանքային ֆունկցիաները: Ձեռնարկչատիրության սոցիալ-տնտեսական բովանդակությունը:</p> <p><u>Թեմա 2</u> - Ձեռնարկչատիրության ձևի ընտրությունը: Անհատական և կոլեկտիվ ձեռնարկչատիրություն</p> <p>Ձեռնարկչատիրության դրսևորման ձևերը՝ անհատական (մասնավոր) և պետական: Մասնավոր հատվածի առավելությունները: Վենչուրային և ոչ առևտրային ֆիրմաներ:</p> <p><u>Թեմա 3</u> - Սերվիսում ձեռնարկչատիրական գործունեության պլանավորման եղանակները, խնդիրները, մեթոդները:</p> <p>Պլանավորման եղանակները, սոցիալ-տնտեսական և կազմակերպական-տեխնիկական խնդիրները, սկզբունքները և մեթոդները սերվիսում:</p> <p>Պլանավորման տարրերը, տեսակները և դասակարգումը՝ ստրատեգիական և օպերատիվ-արտադրական պլանավորում սերվիսում:</p> <p><u>Թեմա 4</u> - Սերվիսի բնագավառի ձեռնարկության հնարավորությունների վերլուծությունը</p> <p>Սերվիսի բնագավառի ձեռնարկության ներուժի վերլուծություն, դրա բաժինները՝ արտադրություն, իրացում, մարքեթինգ, ֆինանսաներ: Ապրանքի կենսապարբերաշրջանի հիմնական բնութագրերը:</p> <p><u>Թեմա 5</u> - Սերվիսում ձեռնարկչատիրական շահույթի բովանդակությունը, պլանավորումը և բաշխումը</p> <p>Շահույթը, որպես սերվիսի բնագավառի ձեռնարկատիրական գործունեության ֆինանսական հետևանք, դրա բազմանշանակ դերը: Գործառնական շահույթ, դրա հաշվարկման կարգը սերվիսում: Շահութաբերությունը և դրա հաշվարկումը սերվիսում: Շահույթի պլանավորման ուղղակիչ հաշվարկի կատարման և անալիտիկ եղանակները սերվիսում: Շահույթի բաշխումը սերվիսում:</p> <p><u>Թեմա 6</u> - Սերվիսի բնագավառի ձեռնարկության արտադրանքի արտադրության և իրացման ծախսերը: Հասույթ և շահույթ: Շահույթի հաշվարկման կարգը սերվիսում</p> <p>Արտադրանքի արտադրության և իրացման ծախսերի կազմն ու կառուցվածքը սերվիսում, դրանց ազդեցությունը ինքնարժեքի մակարդակի և կառուցվածքի վրա: Հաստատուն, փոփոխուն, համախառն, աշխատանքային, նյութական և դրամական ծախսեր սերվիսում: Հասույթը, որպես շահույթի ձևավորման գլխավոր աղբյուր սերվիսում: Շահույթի հաշվարկման կարգը սերվիսում:</p> <p><u>Թեմա 7</u> - Բիզնես-պլանի կազմումը</p> <p>Պլանավորումը որպես գործարար նախագծման եզրափակիչ փուլ սերվիսում: Բիզնես-պլանի ձևը, բովանդակությունը, հիմնական բաժինների (ընդհանուր, արտադրական, գովազդի, մարքեթինգի,</p> |

ֆինանսական, ռիսկի կառավարման) բնութագրումը: Բիզնես-պլանի մշակման մեթոդիկան սերվիսում:

Թեմա 8 - Սերվիսի բնագավառի ձեռնարկության հիմնական ֆինանսական փաստաթղթերը: Հաշվեկշիռ: Դրա ակտիվային և պասիվային բաժինները:

Սերվիսի բնագավառի ձեռնարկության ֆինանսական հաշվետվությունները և դրանց պարտադիր վավերապայմանները:

Սերվիսի բնագավառի ձեռնարկության հաշվեկշիռը, դրա ակտիվային և պասիվային բաժինները: Կանոնադրական, շրջանառու, պահուստային կապիտալ, կուտակման, սպառման և արժութային ֆոնդեր: Դրանց բնութագրումը: Սերվիսի բնագավառի ձեռնարկության ֆինանսավորման ներքին և արտաքին աղբյուրները:

Թեմա 9 - Գործարարության տեսակները: Միջնորդային գործարար գործունեություն սերվիսում

Պետական և մասնավոր գործարարություն: Դրանց դասակարգման հիմքը, իրականացման սկզբունքները: Արտադրական և միջնորդային գործունեություն սերվիսում, դրանց տարբերությունը:

Ավանդական և նորարական գործարարություն սերվիսում: Արտադրական գործարար գործունեության հիմնական և օժանդակ տեսակները:

Թեմա 10 - «Ներդրումներե հասկացության տնտեսագիտական Էությունը, ներդրումների ձևերը: Ներդրումների արդյունավետության գնահատման սկզբունքները և չափանիշները սերվիսում

«Ներդրումներե հասկացության տնտեսագիտական Էությունը: Ներդրումների ձևերը՝ միջազգային և միջպետական վարկերի տրամադրումը, պորֆեյլային և ուղղակի ներդրումները: Դրանց տարբերությունները: «Ձեռնարկության ինվեստիցիոն գրավչությունե հասկացությունը սերվիսում: Ներդրումների արդյունավետության գնահատման սկզբունքները և չափանիշները սերվիսում: Ներդրումների արդյունավետության գնահատման պարզ (ստատիկ) և դինամիկ փոփոխման մեթոդները սերվիսում:

Թեմա 11 - Լիզինգը սերվիսում: Լիզինգի տեսակները: Լիզինգային պայմանագիր: Ֆակտորինգը սերվիսում

